ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1955 Общественные науки

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (1941—1945 ԹԹ.)»*

Սովետական Միության 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ ձեռք բերված համաշխարհային-պատմական հաղթանակը մի փայլուն էջ է սովետական ժողովրդի հերոսական տարեգրության մեջ։

1941—1945 թվականներին, երբ գենքի ուժով վճռվում էր մեր երկրի բախտը, Սովետական Հայաստանի աշխատավորներն իրենց արժանի տեղը գրավեցին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ, մեր մեծ Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող վճռական գոտեմարտում։ Պատերազմի հենց սկզբից, սոցիալիստական մյուս ազգերի հետ միասին, մեր Հայրենիքի պաշտպանության համար հերոսական պայքարի դուրս եկավ նաև սոցիալիստական հայ ազգը, պատվով կատարելով իր պարտքը իր հայրենիքի հանդեպ։ Ա. Մնացականյանի աշխատությունը «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում» առաջին հետաքրքիր փորձն է՝ ի մի բերելու այս ժամանակաշրջանին վերաբերվող հարուստ նյութը։

Դրախոսվող աշխատությունը բաղկացած է ներածությունից, 10 գլխից և եզրափակումից։ Աշխատության առաջին գլխում, որը կրում է «Սովետական Հայաստանը Հայրենական Մեծ պատերազմից առաջ՝ խաղաղ շինարարության տարիներին» խորագիրը, համառոտակի, բայց համոզիչ փաստերով ու թվերով ցույց է տրված, թե ինչ է տվել Սովետական իշխանությունը, Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործումը հայ ժողովրդին։

Աշխատության հաջորդ տասը գլուխներում դրվում են հայ ժողովրդի պատմության հարցերը 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում, նրա զավակների հերոսական սխրագործությունները ռազմաճակատներում ու թիկունքում։ Երախտագիտական ջերմ զգացմունքով են նշված Սովետական Միության կազմի մեջ մտնող ռուս մեծ ազգի ծառայություններն ու ղեկավար դերը Հայրենական Մեծ պատերազմում, ռուս զեներալների, սպաների, մարտիկների անգերազանցելի մարտական հատկությունները՝ հերոսությունը, կայունությունը, ինքնազոհությունը, հաղթանակ ձեռք բերելու նրանց անհողդողդ կամքը։

* * *

Աշխատության մեջ ժամանակագրական կարգով շարադրված է հայ ժողովրդի հերոսական պատմությունը 1941—1945 թվականներին, սկսած պատերազմի առաջին օրերից մինչև նրա հաղթական վախճանը։ Սովետական Միության վրա հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից հետո, ռեսպուբլիկայի քաղաքներում ու գյուղերում գումարված բազմամարդ միտինգներում աշխատավորները միահամուռ կերպով երդվեցին մինչև արյան վերջին կաթիլը հավատարիմ մնալ սոցիալիստական Հայրենիքին։

Գրքում հանգամանորեն նկարագրված է հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական պատերազմին՝ բոլոր ռազմաճակատներում։ Պատերազմի առաջին օրերին Սովետական Միության արևմտյան սահմանների վրա թշնամու առաջին հարվածներն իրենց վրա ընդունեցին ու հիտլերյան զավթիչներին ջախջախիչ հակահարվածներ հասցրին Սովետական Բանակի միավորումները, որոնց կազմում գտնվում էին նաև հայ ժողովրդի շատ զավակներ։ Այդ կատաղի մարտերի կրակի ու բոցերի մեջ ծնունդ առան

* Ա. Մնացականյան, *Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941—1945)*, ԳԱ Հրատարակչություն, 1954։

առաջին հայ խիզախները։ Ամբողջ երկրում թնդաց անվեհեր օդաչու Գ. Գազազյանի, մայոր Ապրեսյանի և բազմաթիվ այլ հայ ռազմիկների համբավը։

1941 թվականի օգոստոսի 26-ին «Գրավդա» թերթը՝ «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակից է» խորագիրը կրող իր առաջնորդողում գրել է. «Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում... Հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կանգնեց Հայրենիքը պաշտպանելու»։

1941 թվականի աշնանը Մոսկվայի վրա կախված ահավոր վտանգի օրերին, սովետական բոլոր ժողովուրդների հետ հայ ժողովուրդը ևս վճռականությամբ հանդես եկավ հանուն Մոսկվայի պաշտպանության՝ «Մեր հարազատ Մոսկվան չենք տա թշնամուն» լոզունգով։ Մայրաքաղաքի հերոսական պաշտպանության և թշնամու գորքերի ջախջախման համար մղվող մարտերում իրենց զորավարական տաղանդով աչքի ընկան գեներալ, այժմ Սովետական Միության մարշալ Հ. Բագրամյանը, հրետանու գեներալ Բարսեղովը, հետևակային դիվիզիաների հրամանատարներ Ս. Մարտիրոսյանը, Հ. Մարտիրոսյանը, Հ. Գասպարյանը, Ս. Գինոսյանը և մյուսները։ Հարյուրավոր հայ ռազմիկներ և աշխարհազորայիններ խիզախության և անձնազոհության օրինակ ցույց տվին Մոսկվայի մատույցներում մղված արյունահեղ մարտերում։

Աշխատության մեջ հուզիչ էջեր կան Ռազմա-ծովային ուժերի, նրանց շարքերում մարտնչող հայ ծովայինների, հերոս քաղաքներ Սևաստոպոլի, Լենինգրադի և Օդեսայի հայ պաշտպանների մասին։ Պատերազմի ծանր օրերին հռչակվեց նավատորմի ադմիրալ Ի. Իսակովի անունը, որը Լենինգրադի և Սևաստոպոլի պաշտպանության ակտիվ ղեկավարներից մեկն էր։ Անմար փառք վաստակեց Բալթիկայի կարմրադրոշ Ռազմա-ծովային նավատորմի գրոհային օդաչու, հետագայում Սովետական Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյանը։ Հարազատ Լենինգրադի համար իր կյանքը տվեց նաև քաջարի գեներալ-մայոր, բանակի ռազմական խորհրդի անդամ Բենիամին Գալստյանը։

Ապա հեղինակը պատմում է 1941—1942 թվականներին հայկական զորային միավորումների կազմավորման մասին, միավորումներ, որոնք ակտիվորեն մասնակցեցին Ղրիմի, Կովկասի, Ստալինգրադի պաշտպանությանը, ինչպես նաև հետագա հաղթական բոլոր ճակատամարտերին։ 1942 թվականի գարնանը Ղրիմում՝ Կերչի թերակղզում, լարված մարտերի պայմաններում կազմակերպվեց հայկական հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Զաքյանի հրամանատարությամբ, որը կատաղի մարտերով ջախջախիչ հարվածներ հասցրեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիային։ Ղրիմի համար մղված մարտերում հերոսի մահով զոհվեցին հայկական դիվիզիայի հրամանատար գնդապետ Զաքյանը, դիվիզիայի կոմիսար Թ. Շահինյանը, Սևծովյան նավատորմի անվեհեր օդաչու՝ Վ. Վարդանյանը, Շ. Աղեկյանը, երիտասարդ բանաստեղծ Թ. Հուրյանը և ուրիշները։

Գրքում ծավալուն տեղ է տրված Ստալինգրադի և Կովկասի պաշտպանությանը։ Այնտեղ մանրամասնորեն վերլուծման է ենթարկված երկրի ռազմա-քաղաքական իրադրությունը 1942 թվականին, ինչպես նաև հայ ժողովրդի մասսայական բնաջնջման ֆաշիստական պլանների մասին, որը տեղ էր գտել, այսպես կոչված, գյորինգյան «կանաչ թղթապանակ»-ում։ Հեղինակը համոզիչ փաստերով մերկացնում է Անդրկովկասը գավթելու, նրան ստրկացնելու Թյուրքիայի կառավարողների և անգլո-ամերիկյան իմպերիալիստների հանցավոր պլանները։

Ստալինգրադի համար մղված ճակատամարտերում մարտական առաջադրանքը փայլուն կատարեց Հայաստանի քաղաքացիական կռիվների բովում ծնված, իր կազմով մեծ մասամբ հայ ռազմիկներից բաղկացած Կ. Ե. Վորոշիլովի անվան լեռնա-հրաձգային դիվիզիան, որին 1942 թվականի նոյեմբերին շնորհվեց գվարդիականի կոչում և մարտիկներից 3,000 հոգի պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։ Վոլգայի անառիկ ամրոցի՝ Ստալինգրադի պարիսպների տակ ռուս դյուցազունների կողքին Սովետական Բանակի միավորումների կազմում իրենց զորամասերով թշնամու դեմ համառ և հաղթական մարտեր մղեցին հայ գեներալներ Ս. Գալաջյանը, Ի. Վեքիլյանը, Հ. Թումանյանը, Սովետական Միության հերոս Ասք. Կարապետյանը, գվարդիայի գնդապետ Մ. Մաթևոսյանը։

Ստալինգրադի մոտ Սովետական Բանակի տարած համաշխարհային հաղթանակով արմատական շրջադարձ տեղի ունեցավ Սովետական Միության հայրենական Մեծ պատերազ-

մի ընթացքի մեջ։ Հարաճուն հարձակողական գործողություններով Սովետական Բանակն սկսեց թշնամուն ջախջախել և մասսայաբար վռնդել մեր տերիտորիայից։

1943 թվականի աշնանը հաջողությամբ լիկվիդացվեց նաև Թամանյան թերակղզում և Կուբանում ամրացած թշնամու մեծ խմբավորումը։ Հաղթանակով ավարտվեց Կովկասի համար մղված ճակատամարտը։ Այդ հարձակողական մարտերում սովետական մյուս զորամասերի թվում աչքի ընկավ գնդապետ Ն. Սաֆարյանի ղեկավարած հայկական հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Գերագույն Գլխավոր Հրամանատարի շնորհակալությանը և ստացավ Թամանյան կոչում։ Հայ ռազմիկները մասսայական հերոսություններ կատարելով, հարստացրին դիվիզիայի ռազմական սխրագործությունների տարեգրությունը։ Ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը իր կրծքով փակեց թշնամու դզոտի գնդացրային հրակնատը և ապահովեց իր ստորաբաժանման առաջ շարժումը դեպի Նովորոսիյսկ քաղաքը։ Հերոսի մահով ընկան Սուրեն Առաքելյանը, անվեհեր սակրավոր Ջանան Կարախանյանը։ Դիվիզիայում աչքի ընկած 2.000 ռազմիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։

Ուկրաինայում գործող բազմաթիվ զորամասերի շարքում իր մարտական գործողություններով աչքի ընկավ նաև հայկական դիվիզիան, որը Կիրովոգրադ քաղաքն ազատագրելու, մարտերում աչքի ընկնելու համար արժանացավ Կիրովոգրադյան կոչման։

Մերձբալթիկայի և Բելոռուսիայի ազատագրման մարտերում վճռական դեր կատարեցին բանակի գեներալ Հ. Բագրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը։ Այդ զորքերը։ Բելոռուսական 3-րդ ռազմաճակատի զորքերի փոխգործողությամբ, փայլուն հաղթանակ տարան Շաուլյայ քաղաքից հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք կատարած գործողություններում։ Այդ ռազմաճակատներում մղած մարտերում իրենց մարտական գործողություններով աչքի ընկան նաև գեներալներ Հ. Մարտիրոսյանի, Կ. Հախնազարյանի և ուրիշների ղեկավարած զորամասերը։ Անգնահատելի գործ կատարեցին Ուկրաինայում, Բելոռուսիայում և մյուս վայրերում գործող պարտիզանական միավորումները, նրանց շարքերում գտնվող հայ պարտիզանները, հայկական պարտիզանական ջոկատները։

Աշխատության ռազմաճակատային մասը եզրափակվում է Սովետական Բանակի կողմից 1945 թվականին ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի վերջնական ջախջախման համար մղած մարտերի նկարագրությամբ։ Այստեղ հիմնական գծերով տրված են Բեռլինի գրավման համար մղված մարտերը, որոնց ակտիվորեն մասնակցեց նաև հայկական Թամանյան դիվիզիան։ Նա իր մարտական դրոշը Կովկասի նախալեռներից փառքով հասցրեց մինչև Բեռլին և Բեռլին մտած Սովետական Բանակի հաղթական միավորումների շարքերում արժանի կերպով նշվեց Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամանում։ Թամանյան դիվիզիան դարձավ Կարմիր Աստղի, Մարտական Կարմիր Դրոշի և Կուտուզովի երկրորդ աստիճանի եռաշքանշանակիր դիվիզիա։

Աշխատության 10-րդ գլխում նկարագրված են թիկունքում Հայաստանի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հերոսական աշխատանքի ու պայքարի արդյունքները։ Փաստական հարուստ տվյալների օգտագործումով հեղինակին հաջողվել է ցույց տալ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ թիկունքում ծավալված հերոսական աշխատանքը՝ ռազմաճակատին օգնելու, նենգ թշնամու դեմ հաղթանակը կոփելու համար։ Պատերազմի հենց առաջին օրերից ռեսպուբլիկայի արդյունաբերական բոլոր ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում և սովետական տնտեսություններում ավելի ու ավելի լայն ծավալ է ընդունում սոցիալիստական մրցությունը՝ ռազմաճակատին ավելի շատ արտադրանք տալու նշանաբանով։ Ռեսպուբլիկայի էկոնոմիկան կազմակերպվում է ռազմական ժամանակվա պահանջներին համապատասխան։ Պատերազմի տարիներին ռեսպուբլիկայում յուրացվում և արտադրվում է 270 նոր տեսակի արտադրանք։ Կանայք և երիտասարդները հերոսական աշխատանք են կատարում ռազմաճակատ մեկնածներին փոխարինելու, արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության աշխատանքը անխափան շարունակելու համար։ Հերոսական աշխատանք կատարեց Սովետական Հայաստանի ինտելիգենցիան։

Չնայած աշխատության արժանիքներին, նրանում տեղ են գտել նաև մի շարք թերություններ։ Աշխատությունը ծանրաբեռնված է կողմնակի հարցերով և նյութերով։ Ավելորդ մանրամասնություններով է խոսվում մինչռևոլյուցիոն շրջանում հայ գյուղի սոցիալական և ազգային ճնշման մասին, այնտեղ տվյալներ են բերված 1913

թվականին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի, 1920 թ. թյուրքական արշավանքի ժամանակ Կարսի, Արդահանի օկուպացիայի, 1921 թվականի դաշնակցական ավանտյուրայի մասին և այլն։ Անդրադառնալով գյուղատնտեսության կոլեկտիվացմանը հեղինակը տվյալներ է բերել սկսած 1924 թվականից, մանրամասն կանգ է առել 1941—1945 թվականներին Երևանի Քաղսովետի Գործկոմի կողմից բնակարանային շինարարության պլանները թերակատարելու վրա և այլն և այլն, հարցեր, որոնք անմիջապես չեն առնչվում թեմայի հետ։ Դրա հետևանքով առաջ է եկել ձգձգվածություն, որն ավելի նկատելի է երկրորդ և տասերորդ գլուխներում։ Ընդհանրապես աշխատության մեջ աչքի է ընկնում մի շարք կարևոր հարցերի վերլուծման մակերեսայնություն. որոշ տեղերում անբավարար են ընդհանրացումները։

Ցանկալի էր, որպեսզի հեղինակը ավելի հանգամանորեն կանգ առներ Հայրենական պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունների և դրանց հաղթահարման վրա։ Պարտիական կազմակերպությունների աշխատանքը թիկունքում ոչ բոլոր դեպքերում է հաջողությամբ բացահայտվել։

1942 թվականի վերջին Սովետական Բանակի կողմից սկսված հարձակողական մարտերի օրերին հայ ժողովուրդը ռազմաճակատի իր դավակներին դիմեց հայտնի նամակնակաղով։ Այդ նամակը «Պրավդան» իր էջերում հրապարակեց 1943 թվականի փետրվարին։ Որանից հետո ռազմաճակատային թերթերը նամակը արտատպեցին և հայ ռազմիկներին հասցրին 1943 թվականի հարձակողական եռուն մարտերի օրերին, որը խոշոր դեր կատարեց ռազմիկների մարտունակությունը բարձրացնելու տեսակետից։ Գրքում նամակը գլխավորապես կապվել է 1941—1942 թվականների հայկական զորային միավորների կազմակերպման հետ, որի հետևանքով որոշ չափով թուլացել է նամակի կատարած դերը։ Կան փաստական կարգի որոշ անճշտություններ։ Այսպես, օրինակ, ցույց է տրված, որ Ասք. Կարապետյանը, Մ. Բոստանջյանը, Ա. Հարությունյանը Սովետական Միության Հերոսի կոչում են ստացել Սաալինգրադի մարտերին մասնակցելու համար, այնինչ նրանք հերոսի կոչման արժանացել են Ուկրաինայի ազատագրման մարտերի շրջանում։ Գրքի վերջում զետեղված ռուսերեն ամփոփումը սխեմատիկ է, այն կարելի էր ավելի լավ մշակել։

Աշխատության մեջ տեղ են գտել նաև լեզվական-ոճական մի շարք անհաջող ձևակերպումներ, մարդկանց և տեղանունների աղավաղումներ և այլն։

Չնայած նշված թերություններին, ընկեր Ա. Մնացականյանի «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում 1941—1945 թթ.» աշխատությունը ուշադրության արժանի ուսումնասիրություն է և կարդացվում է հետաքրքրությամբ։

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Ե. ՄԱԼԽԱՍՅԱՆ